

Դարեգին Մեծառուրեան՝ «Բնարուրիւն կարմառութերի կոմ կարմա-  
(?) կովերը ձանաչելու միջոցները» (ՀՅ պատկերով), Ս.-Պետերբուրգ, 1904-  
թ., զինը 15 կող.:

«Գիւղատնտեսական գրադարան» վերնագրով պ. Յովհան-  
նէս Արամեանը ձեռնարկել է մի շարք հրատարակութիւնների,  
որոնց նպատակն է ծանօթացնել մեր գիւղացուն գիւ-  
ղատնտեսական գործունէութեան լաւագոյն ձևերի և մի-  
ջոցների հետ, նրան մի շարք խորհուրդներ ու ցուցմունքներ  
տալ և միջոցներ առաջարկել բնութեան հետ աւելի յաջող կը-  
ռուելու և իր ուժերը աւելի արդիւնաւոր գործադրելու համար:

Գովելի նպատակ: Մինչև այժմ հայերէն լեզուով գիւ-  
ղատնտեսութեան վերաբերեալ շատ քիչ գրքեր է հրատա-  
րակուած, մինչդեռ այդտեսակ գրքերի անհրաժեշտութիւնը  
վաղուց է զգացուած մեղ մօտ:

Ցիշած գրքի նիւթը ընտրուած է շատ աջող, բայց գըժ-  
բախտաբար չի կարելի նոյնը ասել նիւթի մշակութեան մասին:  
Պ. Մեծառուրեան աշխատել է այս գրքում հաւաքել այն բոլոր  
նշանները, որոնք թոյլ են տալիս դատել կովի կաթնատու լի-  
նելու մասին: Եւ այդ պատճառով նա դիտութեան մէջ ապա-  
ցուցուած և բացատրելի յատկանիշների հետ միասին զետեղել  
է բոլորովին անհիմն և յամենայն դէպս անբացատրելի նշան-  
ներ, ինչպէս են՝ պոչի երկարութիւնը, ականջների մեծու-  
թիւնը (ի դէպ է ասել, որ խօսելով ականջների մասին՝ պ. Մ.  
սիսալում է ասելով, թէ լաւ կաթնատու կովի ականջները պէտք  
«իսիտ մազով ծածկուած լինին»). — Ընդհակառակը), ուլունքը և  
այլն: Նշանների այս կազմութիւնը ոչ միայն չի հեշտացնուած  
գործը, այլ ընդհակառակը՝ կարող է միայն շփոթեցնել ընթեր-  
ցողին: Կարող է նոյնիսկ պատահել, որ կով ընտրելիս իր ու-  
շաղըութիւնը գարձնի այդ երկրորդական, նոյնիսկ անպէտք  
նշանների վրայ, մոռանալով գլխաւորները:

Միթէ արժէք, օրինակ, ամբողջ 7 երես և 10 նկար նուի-  
րել այնպիսի երկրորդական նշանի, ինչպէս է կաթնանիշը  
ձեւը, որի մասին ինքը պ. Մեծառուրեանն ասում է, թէ «կաթ-  
նանիշի տարածութիւնն է, որ նշանակութիւն ունի, և ոչ թէ  
ձեւը» (եր. 34). Նշանների այս բազմութիւնը և խառնաշփո-  
թութիւնը մեր կարծիքով կազմում են գրքի ամենամեծ պա-  
կասութիւնը:

Ինչ վերաբերում է լեզուին, պէտք է ասել, որ նա ընդ-  
հանրապէս ծանր չէ: Բացատրելով այնպիսի խօսքեր, ինչպէս

«գեր» և «նիհար», բացատրուած չեն օտար չափերը։ Նկարները բացի երկուսից (15 և 16) յաջող են։ Մենք արդէն ասացինք, որ վերջի 10 նկարները բոլորպին աւելորդ են և միայն թանգարակ են հրատարակութիւնը։

Գինը 39 երեսի և 26 նկարի նշանակուած է 15 կոպէկ. թում է, թէ այսպիսի հրատարակութիւնների համար այնքան էլ էժան չէ։

Չնայած այս պակասութիւններին, գիրքը յամենայն դէպս կարող է օգտակար լինել մեր գիւղացիների համար, և ցանկալի է, որ նա տարածուի։

ԵՐ. ՍԱՐ.

Վահան Թաւարեկեանի «Թանառեղծուրիւնները», Թիֆլիս, 1903, գին՝ է 50 կոպէկ։

Տպագրուած խօսքի անհամ, անհոտ հեղեղ մըն է որ կը յորդի, կ'ողողէ հրապարակը։ Դպրոցական գրասեղանը հազիւթողած՝ կեանքը դիտելու և ըմբռնելու տակաւին անկարող գրականութեան մէջ նետուելը թթքահայ բարքերու բնորոշ գիծերէն մէկը կը կազմէր։ Հիմայ նոյն տեսարանին հանդիսաւես կ'ըլլամք և ոռւսահայերու մէջ։ Գրելախտէ բռնուելու երևոյթը կը սկսի այսօր նոյնքան ընդհանրանալ Արաքսի այս կողմը, որքան այն կողմը։ Օրինակի համար, ահաւասիկ ձեզի հարիւր երեսնոց բանաստեղծութեանց հատոր մը։ Գրքի միայն առաջարանը բաւական է, որպէսզի մենք համոզուինք թէ հեղինակը տակաւին շատ անդիտակից է ու միամիտ։ Տեսէք։

«Եթէ նա քեզ դուր չի գայ—կը գրէ առաջարանին մէջ պ. Թաւարբէգեան իր բանաստեղծութիւններուն ակնարկելով— անշուշտ չես բարկանալ։ Գիտե՞ս, որ այն նուիրական զգացմունքներն, որոնք բորբոքում են մեր սիրան, այն վեհ գաղափարներն, որոնք յաճախ գալիս են մեզ այցելութեան ու մեզ շրջապատող անելանելի խաւարի մէջ լուսոյ շիթեր արձակում, երբ աշխատում ենք մենք թղթին յանձնել, մանաւանդ երբ ուղղում ենք նոցա չափածոյ տարազով արտայայտել։ Կորցնում են իրանց գեղեցկութեան ամենահրապուրիչ մասն և նմանում են լոկ այլանդակ կմախքի։»

Պ. Թաւարբէգեան իզուր է չարչարուել մեզի բացատրելու թէ որքան դժուար է բանաստեղծ դառնալ։ Պէտք է ծնիլ բանաստեղծական աւելնով։

Պ. Թաւարբէգեանի հարիւրի մօտ բանաստեղծութիւննե-